

ՅԼ ԻՆԵՐԻՆ

ՊԱՅՄԱՆՔ 3

Սրիս
Տարեկ. 10 ֆր.

Վեցամս. 5 "

Արտասահման

Տարեկ. 12 ֆր.

Վեցամս. 6 "

Ամերիկա

2 Տղ. 30 սենդ

ԿԱՆԽԻԿ



Գրութիւնք եւ
չեն տրուիր:

Հասցէ

DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE

ՇԱՐԱԹԱՀԱՆԴԵՍ . ԱԶԳՍՅԻՆ ԵՒ ԶԱԻԵԾՏԱԿԱՆ

Отговорникъ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, Адвокатъ.

Ե. ՏԱՐԻ

ՀՈԿՏ. 27 ՇԱՐԱԹ 1901

ԹԻԻ 228

ԱԶԳԱՅԻՆ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԷՖ. ԿԻԻԼՊԵՆԿԵԱՆԻ ՀԱՐՈՆԻՔԸ

Կիւլպէնկեան բարեհամբաւ նահապետական գերդաստանի հարազատն Վսեմ. Յարութիւն էՖ. Կիւլպէնկեան՝ անցեալ երկուշաբթի օրը ի Գաւոր գիւղ Աշրգեան Պողոս պէյի գուտոր Օր. Նոյեմբի հետ ամուսնանալուն առթիւ Ազգ. Հիւանդանոցի մէջ գտնուած 1014 պտտապարելոց երկու օր, ցորեկ և իրիկուն. ճոխ հացկերոյթներ տալէ զատ, 100 օսմ. ոսկի ալ նուիրած է Ազգին բաղմակարօտ Տան:

Ծաշացուցակը կը կազմէ եղեր փորը լեցուած հնդկահաւ. խորոված միս բաթաթէսով, սերկեւիլի անուշեղէն, կրավիէրի պանիր, և անհրաժեշտ քրքումեղիններ (բիւլով զէրտէ):

Սոյն երկու օրուան ճաշկերոյթներուն, որ տեղի ունեցած են հարսնիքէն երկու օր առաջ, Յարութիւն էՖ. անձամբ ներկայ գտնուելով, հսկած է սեղաններուն:

Բարեկամաց և ողջականաց կողմէ ալ փոխան ծաղկեփունջի 30 ոսկիի նուիրատուութիւն եղած է Հիւանդանոցին:

Պսակի արարողութիւնը կատարուելէ ետքը նորապսակ ամուսնեւոր եւրոպա ուղեորած են Արեւելեան ճեպընթաց կառախումբով, իրենց մեղրալուսինը անցնելու համար Վիէննա և Բարիկ ու պիտի վերադառնան Մարախիոյ ճամբով:

Որբանոցի աշակերտուհիք հաջօրին ու փեսին նուիրած են նրբարուեստ գեղեցիկ բարձ մը ոսկեթել Յ. Ն. Կ. սկզբնատառերով. արհեստա-

նոցի որբերուն կողմէ ալ նրբաքանդակ և ծաղիկներով գեղահիւս երկու աթոռներ որոնք հարօրին ու փեսին տրամադրելի գտնուած են Պսակի միջոցին: Որբանոցի աշա երաներէն ալ գեղարուեստական սքանչելի ուղերձ մը զրկուած է շնորհակալութիւն և շնորհաւորութիւն արտայայտող, որոնք գոհունակութեան մեծ առիթ մը ընծայած են իրենց բարերարներուն և հանդիսատեսներուն:

Հարսին զրկուած նուէրներուն մէջ տեսնուած են Տ. և Տիկին Պատրիկ Կիւլպէնկեանի կողմէ 5000 ֆր. ի չէք մը, փեսին կողմէ ալ ադամանդակուռ քայռ (կէրսանը) մը և մատանի մը, տիկին Հռիփսիմէ Մանուկեանի և որդւոց կողմէ սեղանի ամբողջ արծաթ սպասք. հարսին ծնողաց կողմէ ադամանդազարդ թանկագին զոյգ մը օղ. Տ. և տիկին Իէյիսեանի կողմէ ոսկի բաժակներ, Տ. և տիկին Սմբատ Քեաթիպեան ադամանդազարդ գնդասեղ մը, Տ. և տիկին Պողոս Քէրէսթէճեան սուրճի ոսկեղրուազ գաւաթներ, Գ. Մանուկեան ադամանդազարդ քայռ մը, այրի տիկին Մ. Մանուկեան ադամանդակուռ քայռ մը, նոյնպէս, Աղա Մօլլա պարսիկ վաճառականը թանկագին շալ մը և ուրիշ շատ մը ընծաներ աղգականներու, բարեկամներու և համակրողներու կողմէ:

— Բարիկի Հայ եկեղեցին պիտի կանգնուի Շանդ Էլիզէի թաղին մէջ Ժան Կուստան փողոցին վրայ, ուր կը բնակին Բարիկի էն ականաւոր ընտանիքները: Մայրաքաղաքին «արխթօքթիթիք» թաղն է եղեր այն:

—Մոսկուարնակ իշխանուհի Աբամելիք Նազարեան իւր հարիւր տասը հազար ոսկի արծաղութեամբ մէկ տունը նուիրեց է Մոսկուայի Հայ եկեղեցիին, որուն հասոյթովը Լազարեան Ճեմարանի մէջ չքաւոր ուսանողները պիտի նպաստաւորուին :

—Վանայ Սալնապատի աղջկանց որբանոցին մէջ գորգագործութեան ճիւղ մը հաստատուեր է :

ԸՆՏՐՈՒՅԻՒՆ ԿԻՒԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Կիւիկիոյ Կաթ. ընտրութեան ձեռնարկուած է ամսոյս 20ին, Ատանայի մէջ Նախ՝ առաւելագոյն քուէ ստացող վեց գանտիտաներու անունները պիտի մատուցուին թէ՛ Ազգ. Պատրիարքարանի և թէ՛ Դատական և Կրօն. նախարարութեան, ինչպէս որ կըլլայ Յունաց և ուրիշ Պատրիարքներու ընտրութեանց առթիւ : Սոյն ցուցակը նախարարութեան կողմէ սրբագրուելէ ետքը պիտի վերադարձուի Պատրիարքարան՝ Ատանայի ընտր. ժողովին ղրկելու համար, որ Բ. անգամ ի նիստ գումարուելով, անոր մէջէն քուէից առաւելութեամբ պիտի ընտրէ Կիւիկիոյ Կաթողիկոսը որ Կայսերական վաւերացման պիտի ենթարկուի :

Սոյն ընտրութեան պիտի մասնակցին 20 կըղեր և 40 աշխարհական, Առաջնորդ և տեղապահք եթէ անձամբ չկարենան գալ, կրնան իրենց քուէները ղրկել, իսկ աշխարհական անդամք անձամբ պէտք է մասնակցին քուէարկութեան առանց փոխանորդի : Կառավարութեան կողմէ նահանգին մէքրուպճիմ միայն ներկայ պիտի ըլլայ ընտր. ժողովոյ նիստերուն :

(Պէտք է գիտնալ թէ Կիւիկիոյ Կաթողիկոսը Սիսի միաբան եպիսկոպոսներէն կընտրուի ինչպէս էր հոգեւոյս Ալեքսիսեան Գրիգորիս Սրբազան : Օրմանեան և Բարթուղէմիոս Չամչեան Սիոի միաբան չեն : Այժմ Պոլսոյ եպիսկոպոսներուն մէջ Վեհափառեան Մկրտիչ և Մեսրոպ եպիսկոպոսներն են թիւի միաբանն :

ՔԱՂՈՒԱԾ

ՇԱՐԱԹԱԿԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՐՈՑ

Ազգ. Պատրիարքարանը լաւ տնօրէնութիւն

մը ըրած է . այսուհետեւ Պուլկարիոյ մէջ պաշտօնավարող քահանայք՝ առանց Պատրիարքարանի հաւանութեան տեղափոխութիւն չպիտի կրնան ընել, այսինքն, «անդին 10 ֆրանք աւելի կուտան կոր» ըսելով փիլիսինին չալկած քաղքէ քաղաք անդառտան չպիտի պտտին : Կեդրոնի սոյն տնօրէնութեամբը կարգ մը թաղ. խորհուրդներն ալ չպիտի կրնան իրենց ֆէյժին չհամակերպող քահանաներուն երթալ բարով ըսելով եկեղեցիները երբեմն առտնց քահանայի ձգելու և ժողովուրդը հոգեւոր մխիթարութենէ զրկելու :

—Կը լսենք թէ Պուրկալի Ազգ. վարժարանը տակաւին փակ է շնորհիւ երկպառակութեան, նոյնպէս Տոպրիչի վարժարանն ալ կէս բաց ու կէս գոց կըլլայ եղբւր միեւնոյն պատճառաւ :

(Տէր տեսցէ և այց արասցէ, քանի որ Այցելու հովիւը ոչ այց արասցէ :)

—Սօֆիաի թաղ. խորհուրդն ալ անհնարինո խնդրէ . թերթերու միջոցաւ պարտաճանաչ քահանայ կը փնտռէ, բան մը որ արտասահմանի մէջ մատի վրայ կը համրուի, Թաղ. խորհուրդը պէտք է Կեդրոնին դիմէ, որուն միջոցաւ միայն կրնայ պարտաճանաչ քահանայ գտնել . (զի ո՞ր քահանան կըսէ թէ ես պարտաճանաչ չեմ) : միայն պէտք է գիտնալ որ պարտաճանաչ քահանան ալ պարտաճանաչ թաղ. խորհուրդ կ'ուզէ :

ԱՆՀԵՏԱՑԱԾՆԵՐ

Վահան Շահրիման, նախորդ տնօրէն Վառնայի և Ֆիլիպէի ազգային վարժարանաց, երբեմն աշխատակից կամ յօւււածագիր Պուլկարաւայ երկու քաղաքական թերթերու, այժմ հանդերձեալ խմբագրապետ Ամերիկահայ թերթի մը, ջերմ տղգասէր, (Բոժ. վրաս դրէ) ըստ վկայութեան Վահան Մաղմանեանի, Լեւոն Սարգիսեանի և այլոց՝ մատնիչութեան սոսկալի և անբուժելի ախտէն վարակուած ըլլալով, այս շաբթու կանհետանայ բարոյական աշխարհէն :

Լեւոն Սարգիսեան, ուսուցիչ Վառնայի և Ֆիլիպէի ազգային վարժարանաց, երբեմն թղթակից կամ աշխատակից Պուլկարաւայ երկու քաղաքական թերթերու և վերջերս փոխ-խմբ.

բազիր անոնցմէ մէկուն, ջերմ ազգասէր, (վրաս գրէ), ըստ վկայութեան Վահան Մազմանեանի, Վ. Շահրիմանի և այլոց և ըստ իւր հրապարակային յայտարարութեան՝ Վ. Շահրիմանի վարակուած ախտէն պլշկուած ըլլալով, այս շարթու կանհետանայ բարոյական աշխարհէն:

ՋՈՒԹԱԿ

Բոժ. — Ճանրմ միւսիւ Զութակ, կանհետանան ի՞նչ ըսել է. շիտկէ շիտակ «մեռան» ըսէ՛ մէջէն ելիր:

ԳԵՂԵՑԻԿ ԽՕՈՔԵՐ

Կ Ի Ն Ը

Գեղեցիկ կին մը աչքերու, իսկ բարի կին մը սրտի հաճելի են. մին գոհար մը, միւսը զանաւ մըն է:

ՆԱՔՈՂԵՍԻ

Կինները մեզմէ աւելի հաւատք ու սէր ունին, հետեւաբար մեզմէ աւելի անձնուէր են. Ու քանի՛ էակ մը անձնուէր ըլլայ՝ այնչափ մեծանձն կըլլայ. ահա կիներու գերիվերութիւնը:

ԷՄԻՂ ՏԵՂԱՆԵՂ

Մինչև երեսուն արեկան կնոջ մը դեմքը օտար լեզուով գրուած է՝ յոր հակառակ բոլոր դժուարութիւններուն տակաւին կրնանք թարգմանել, իայց քառասունը անցնելէ յետոյ բոլորովին անընթեռնելի կըլլայ ու այլ ևս ծեր կին մը միայն կրնայ կարդալ, հասկնալ զայն:

ՊԱՂՐԱԳ

Երբ տասներեւթը տարեկան են՝ փութով կը սկսինք պաշտել՝ քսանին կը սիրենք, երեսունին կը փափագինք, քառասունին կը մոմտանք:

ԲՕՂ ՏՐՔՕՒ

Աստուած ալ փորձած է երկու գործ յօրինել. իր արձակը՝ այրը, ոտանաւորն ալ կինն է:

ՆԱՔՈՂԵՍԻ

Դիտուած է որ բոլոր արարածներէն կատուները, ճանճերն ու կիններն են որ ամենէն շատ ժամանակ կը կորսնցնեն իրենց արդուղարդին համար:

ՇԱՈՂ ՆՈՏԻՆ

ՍՐԱՀ ՈՍԷՏԻՆԵՆԻԷԻ

Այս գիշեր ժամը ճիշդ ծակէսին, երիտասարդաց կողմէ առաջին անգամ ըլլալով պիտի ներկայացուի

ԳԱՔԻԹԱՆ ԹԱՔԻ

Եղերգ 5 արար 4 պատկերով

Երգ և Պար Օր Վէնէթօի կողմէ

24 ժամ մահ, տրամ գօմէտի 3 արար:

ՏԵՂԵՑԻԿ

ՍԺԱՆԱ ԲՈԺՈԺԻԿ ԵՆ ԸՆԿ.

ՔԱՃԱԹՔԱ

Ասդենի դերասանական խումբս նկատի առնելով Անդենի խմբին պահանջը, ի մասին Մ. Մնակեանի, Ս. Պէնլեանի և մանաւանդ Տ. Գալէմճեանի շուտափոյթ Անդեն ղրկուելուն, որոշեց արհեստակիցներու ընդհանուր ժողով մը կազմել ամենուն կարծիքը առնելու համար, ըստ որում Տ. Գալէմճեան համաշխարհագրապանական մարդ է, ամեն խումբի մէջ կը մտնէ կելլէ. հետեւաբար ժողովատեղի որոշուեցաւ Քէլքիւթիկի չոր այգին և ըստ այնմ հրաւիրագիր ղրկուեցաւ այլազան դերասանական խումբերու:

Պատճէն հրաւիրագրի.

Յամի Տն. 1901, բուն թուականին հայոց 8827-4923 և Տօմարական թուականին ազգիս ՌՅԾ 1350 փոքր թուոյն Ազարիտի 286, Հրէից թուականին 5662, Տաճկաց թարիգի էլ Խիւտապէնտիկեարի 1319, յամսեանն Քաղոցի 7, Սէքէթի 14 և Թէքէթի 29, հոկտ. 8, թշրինի էվվէի 7, յաւուրն խտրէլէզական 169 և յետ պաղպոզումիական Փուրթունայի, լուսնի առաջին բառորդի և վերջին բառորդին պուրճի ագրէպի, յնց. սրբոցն Փոկաուու հայրապետին և Գենարիտի հետեոյին, հրաւիրեալ են Քէլքիւթիկի չոր այգին ասդենական դերասանք և դերասանուհիք, երաժիշտք և երգչուհիք, դորձակատարք եւ ավիզութօրք, թապէլաճիք եւ պօխճաճիք խաբուճիք եւ պիլէթիք, տպագրիչք եւ քրօնկագիրք, առանց վճարելու թատրոն մտնող մեծարոյ ազգայինճիք:

Որոշեալ օրը հաւաքուած էին ի մէջայլոց անդամք Հայաստանահայրապետական խմբին, Վարեանց յունահայկական անխօս խմբին, մեծագործ լիրախառնում խմբին, տէօրիւնթիւք սարկապուրկա խմբին, Հայապուլկարաճաբոնական խմբին եւն. եւն.

Յետ երկար աղմկալի վիճաբանութեանց, ժողովը նկատելով որ Տ. Գալէմճեանի ճամբորդութիւնը դիւրացնելու համար անդենէն ասդեն գրամ ղրկելը կամ երաշխաւոր ցուցնելը ասդենականաց արժանապատուութեանը կը դպչի, որոշեց Գալէմճեանի անդեն ուղեւորելու ծախուցը համար թատերական նպաստ մը տալ: Սոյն որոշումը հաղորդուեցաւ Անդենի խմբին, որուն պատասխանին անհամբեր կը սպասէ Պ. Գալէմճեան՝ պակաճը շալկած:

ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Փայտե Շախտ

Ծառը կտրել ու շաքար չինել: Ահա բան մը որ պաւնայ չէ: Այսուհետեւ պիտի կրնաք ձեր թէյի դաւաթին մէջ դգալ մը կաղնիի կամ եղևինի շաքար լեցնել: Այս գիտին հեղինակն է Պ. Ա. Քլասէն, որ մենաշնորհ առաւ Ֆրանսայի համար: Փայտը կամ փայտին սղոցուկը, ինչպէս բոլոր այն նիւթերը, որոնք նշայե նշայանման բաներ կը պարունակեն, գիւրաւ կը շաքարանան, այսինքն շաքարի կը փոխուին քիմիական կերպով:

Պ. Քլասէնի մէթոտն է փայտը թորել, անոր խորշանիւթը հնթարկելով ծծմբային և ծծմբական թթուներու շրային լուծման, 125էն 145 աստիճան բարեխառնութեան մէջ, գործողութիւնը քառորդ ժամէ մը կաւարտի: Աւելի լաւ կը յաջողի եթէ երկու թթուներուն առաջուց պատրաստուած խառնուրդը դարձածելու տեղ ծծմբական թթուն կալմուի գործիքին մէջ իսկ: Լաւ պայմաններու մէջ մէկ քիլոկրամ չոր փայտէն 30 կրամ շաքարահիւթ կը անուի:

Երկաթե մադդ որ կը խօսի

Ամերիկացի հնարիչ մը՝ Պ. Բիրու ինքնաշարժ կառքերու գեղեցկադիտական երևոյթը փրկելու համար միջոց մը մտածեր է, կառքին առջին կցելով եօթն ու կէս ոտք բարձրութեամբ մարդ երկաթէ մը, որ կառքը քաշելու երևոյթը ունի, մինչդեռ ինքն է որ անկէ կը քշուի: Այս երկաթէ մարդը ստամոքսին մէջ ձայնագիր գործի մը (ՓօնակրաՓ) ունի որուն հանած ձայները ուղղակի կը համապատասխանեն բերանին շարժումներուն, այնպէս որ կարծես թէ ստուգիւ մարդ մըն է խօսողը: Պ. Բերիու այժմ փորձեր կը կատարէ իր կառքին վրայ, որուն շարժիչ մեքենան այնքան ճարտարօրէն ծածկուած է որ կարող մեքենագէտ մը հազիւ կրնայ գտնել զայն: Հնարիչը յետոյ պիտի ձեռնարկէ իր ինքնաշարժ կառքով ուղևորութիւն մը կատարել նիւ Եօրքէն Սան Ֆրանչիսքօ, ժամը 25 քիլոմետր արագութեամբ:

ԾԱԳՆԻՍ ԵՒ ԴՐԱՄ

Ձենք կարծեր թէ մագնիսին ինչ ըլլալը չը գիտնաք: Ո՛վ տեսած չէ Վիլսոնը մը, որ մաս-

նաորապէս երկաթին իրեն կը քաշէ. բայց դժբաժը մարդոց վրայ կ'ազդէ: Անիկա ձգողական ահագին զօրութիւն մը ունի մեր վրայ, զոր ամէնքս ալ կ'ազանք: Այդ մեծազոր չէ՞ր որ ինչ ըրաւ չըրաւ վերջապէս Անգլիացիները մինչև Բերեգորեա իրեն քաշեց: Ի՞նչ յանցանք ունին Ալպիոնի զաւկները: Պետերսբըն են կատարեալ յանցաւորները, Բանի որ այդ անպիտան մեծազոր հիւրընկալած էին իրենց երկիրը:

Ամերիկայի հիւսիսային ռաուտցեալ երկիրներուն մէջ (Մլաւաք-Քլոնտայք) գտնուած սոկիի հանքերը մեծ բազմութեամբ մարդեր քաշեցին իրենց և տակաւին քաշելու վրայ են: Ինչ որ ալ ըլլայ սոկիի քաշողական զօրութիւնը անհուն է: Գաղիական շարաթերթ մը վերջերս հետեւեալ զուարճալի պատմութիւնը կը ներայայտարարէ:

Վալլատուի մէջ (Սպանիա) ԺԸ դարուն Լոռէնցօ անուն վաշխաւու մը սիրահարութեան հետեանքով անձնապաշտ կըլլայ: Աղոր զաւակը, անձնապաշտութեան անպատուութիւնը ծածկելու համար, դադարեալէս 30 ոսկի տալով քահանայի մը, հայրը գերեզմանատան մէջ թաղել կուտայ: Երկու օր վերջը, եպիսկոպոսարանը խնդիրը կիմանայ, և ատենը կը կանչէ անմիջապէս այդ քահանան ու Լոռէնցոյի որդին: Խեղճերուն բանիկը բուսած էր: Գատարտը բացուելով, ներս կը մտցնեն քահանան և Լոռէնցոյի որդին որ երբեք չի վրդովրը, նախագահ եպիսկոպոսը յոնքերը իրարու մօտեցնելով բարկութեամբ իր հարցումը կ'ուղղէ քահանային:

Եպիս. — Նզովելի. . . Ի՞նչ ես ըրեր:

Քահ. — Ներեցէ՛ք, գերաշնորհ հայր:

Եպիս. — Անիծեալ. . . դժոխային շարժաբանաց արժանացիր ես:

Քահ. — Գթացէ՛ք, Տէր:

Եպիս. — (Լօրէնցոյի դառնալով) Դո՛ւն ես որ վրդովեցիր այս քահանային խիղճը, տանջանաց արժանի ես:

Լօրէնցօ. — Տէր, հարս կտակին տրամադրութեանը համեմատ վարուեցայ:

Եպիս. — Ի՞նչ կտակ, նզովելի:

Լօր. — Հայրս ինձ կտակած էր որ զինքը թաղող քահանային 30 ոսկի տամ: Ասկէ զատ, իր մահուանը միջոցին աթոռակալ գտնուողին 150 ոսկի, իսկ ծրկու վարդապետներու իւրաքանչիւրին 75 ոսկի տամ իւր նուէր, որ ահաւասիկ:

Այս ըսելով Լօրէնցօ երեք հարիւր ոսկի պարունակող քսակ մը եպիսկոպոսին առջև գտնուած սեղանին վրայ կը դնէ:

Եպիս. — (Ջարմանալով) Ի՞նչ, միթէ այս այն աղնիւ Լօրէնցօն է և կրտսէք:

Լօր. — Նոյն ինքն է. վստահ եղէ՛ք, գերաշնորհ տէր:

Եպիս. — (Մորուքը շոյելով) Ինչո՞ւ ուրեմն լաւ չէ՞ք բացատրեր ու կը վշտացնէ՞ք իմ սուրբ հոգին. (քահանային դառնալով) Տէր եղբայր...

Քհն. — (Ուրախութեամբ ոտք ելլելով) Հը՛րամայեցէ՛ք գերաշնորհ հայր:

Եպիս. — (Կարեկցութեամբ) Ի՛նչ էր արդեօք տարաբաղդ հանգուցելոյն հիւանդութիւնը:

Քհն. — (Խղճալով) Յաւայի հիւանդութիւն մը գերաշնորհ տէր: Կըսեն թէ ականջներուն ծակլիկները ցնդելով հոգին անտի կծիկն է գըրեր:

Եպիս. — (Դրամը առնելով) Թշուառը՝... բարի էր, գիտեմ:

(Բոժոժիկ. — Աստուած ողորմի հոգուն, աղէկ մարդ էր, ես ալ գիտեմ):

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՐՔԵՐ

ԱՆՃԱՐԱԿ ԾԱՌԱՆ

Հարուստ տան մը անճարակ ծառան, տան տիկնոջ այցելութեան մը պատճառաւ բացակայութեանը մի չոցին, ցորեկ ատեն սալօնին մէջ կարասիները աւելելով կ'ըբաղէր սպասուհիին հետ:

Նոյն պահուն խոհարար կինը սալօնէն ներս կը մտնէ շնչին խնդրոյ մը համար ծառան յանդիմանելու մտք: Այս երկուքը զիրար չէին սիրեր արդէն: Խոհարար կինը բարկութեամբ կըսէ.

— Ծօ՛, սա երէկ իրիկտան ըրածդ վայելեց, դգում գլուխ:

— Նորէն խաֆա՞ պիտի ուռեցնես, քիւրգարձաւ գլուխս: Դինիին ֆըչին չեմ բացեր եղեր, ի՞նչ կ'ըլլայ ատկէ, աս իրիկուն կը բանամ, հէմ քուկին գիտնալիք բանդ չէ ատիկա, տէրը կը խառնուի, քեզի ի՞նչ, հէլվաճի-խապախի...:

— Ատանկ բաներուն ես կը խառնուիմ, աւելի կ'ըթ:

— Հատէ դուն ալ՝ ֆառաշ...:

— Ծօ որո՞ւ կ'ըսես կոր ատիկա լակոտ:

— (Հպարտութեամբ) Դուն սա իմին սալօնէս դուրս կ'ըլլա՞մ մէյմը, հոստեղ ես կը խառնուիմ, պուլաշըս հոտեցուցիր չորս կողմը, (գոռոզութեամբ) հա նայիմ, կորսուէ դուրս՝ ճէնճոտ բաշառվա...:

— (Կրակ կտրելով) Կիտի քեզի անզգամ...

Այս ըսելով խոհարար կինը մօտը գտնուած գօնասլին վրայի զարդարուն թաղարը բարկութեամբ առնելով ծառային գլխուն զարնելու կըլլայ, բայց ծառան վրան կը վազէ ու թաղարը բռնելով թող չի տար. Սպասուհին կը միջամտէ. Խեղճ թաղարը երեք կռուարարներու ձեռքին մէջ վերջապէս կը կոտրի: Նոյն միջոցին ծերուկ պարտիզպանը, որ ձայներնին վարէն կը լսէր, վրայ կը հասնի ըսելով.

— Աֆէրիմ, աֆէրիմ, մարդ մարդասանկ չի կայ եա տունին մէջ, ուղածնուդ պէս կռուեցէք նայիմ. ամօթ չէ՞. կը վայլէ՞ ձեզի, գաբու եօլ, տաշի պիտի ըլլաք...

Խոհարար. — Անոր ըսէ, զըռթլանը...

Ծառայ. — Հոտած միս դուն ալ...

Պարտիզպանը. — Աս սախսին ո՞վ կտրեց.

Ծառ. — Աչճի հանըմին հարցուր.

Խոհ. — Դուն ձեռքէս քաշեցիր անպիտան.

Պարտ. — Հա նայիմ, իրարու վրայ ձգեցէք.

Սպասուհին. — Երեքնիս ալ մաս ունինք մէջը.

Պարտ. — Էյ հիմա ո՞վ պիտի քաշէ ատար ֆասաը. անոր դինը ես գիտեմ. աղաին հետ մէկտեղ առինք չիֆթը 8 ոսկիի.

Խոհարար. — (Ուսերը թոթուելով) Ինչո՞ւս պէտք.

Ծառ. — (Քմծիծաղ) Ինձի ի՞նչ.

Պար. — Անանկ չըլլար, մէկերնուդ մէկը պիտի ցնծայ ասիկայ. եկէք համաձայնեցէք.

Խոհ. — Ի՛նչպէս.

Պարտ. — Աչք-կապուք խաղալով. Երեքնիդ «քար» բռնեցէք իրարու ուլ որ «էպէ» ըլլայ՝ անոր աչո՛ւրները կապեցէք և անիկա ձեր երկուքէն որը որ բռնէ, թող ան վճարէ կոտորուածին գինը:

Չորս ոսկինոց կոտորած թաղաշի մը համար շատ հաւանակսն էր որ տանը մեծը բարկանալով երեքն ալ միասին վռնտէր, և որովհետեւ շատ գոհ էին իրենց տեղէն՝ ուր տմեն տեսակ ճոխութիւն կար, սպասուորները կը համակերպին պարտիզպանին զուարճալի առաջարկութեան և իրարու «քար» կը բռնեն, «էպէ»ն ծառան կըլլաց որուն աչուրները անմիջապէս կապելով խաղը կը սկսի: Զուարճասէր պարտիզպանը անկիւն մը քաշուած հանդիսատես կըլլայ.

Ծառան ձեռքերը երկնցնելով կը սկսի փըն-

տուել: Սպասուհին երիտասարդ և նիհար էր՝ որով
դիւրութեամբ կը փախէր ծառային ձեռքէն
մինչդեռ խոհարար կինը գեր և ծանրաքայլ
ըլլալով, չնչասպառ, կը վախնար որ ինք բռնուի-
արդէն ծառային շանքերն ալ բացարձակապէս
կը մատնէին իր թագուն նպատակը (որ խոհա-
րար կինը բռնել էր): Չարաճճի պարտիպանը
կոկորդալիս կը խնդար դիտելով խոհարարին
փախչելու ծիծաղաշարժ ձեւերը: Սալօնը բաւա-
կան ընդարձակ ըլլալով, անճարակ ծառային
համար դժուրին բան մը չէր նոյն իսկ գիրուկ
խոհարարուհին բռնելը: Աչք-կապուք անձայն կը
շարունակուէր երբ պարտիպանը վարէն ոտքի
ձայն մը կ'առնէ: Հետաքրքրուելով դուռը կ'ել-
լայ և վար իջնալու միջոցին սահմանին վարի
ծայրը տան տիկինը կը հանդիպի որ այցելութե-
նէն վերադարձած՝ պարտէզին դուռը բաց
դռնելով անկէ ներս մտած էր: Տան տիկինը կը
բարկանայ պարտիպանին այդ դուռը բաց թո-
ղած ըլլալուն համար և կը հրամայէ իրեն որ
անմիջապէս գոցէ՝ ուրիշ անգամ չի կրկնելու
պայմանաւ: Ծառան ստիպեալ կ'երթայ գէպի
պարտէզ, մինչդեռ տան տիկինը սանդուխէն
վեր կ'ելլէ: Ասդին սալօնին մէջ, սպասուհին
և խորարարը պարտիպանին դուռն ելլելէն
հետաքրքրուելով, կը կասկածին ճակ իր բացա-
կայութենէն և քիչ յետոյ իրենք ալ անձայն
մը դուռն կ'ելլեն խնդիրը հասկնալու համար, (և
ալ ծառային ձեռքէն փախչելու նպատակով):
Ճիշդ ժամանակին դուռն ելած էին, որովհետեւ
սալօնին միւս դուռնէն տան տիկինը անտար-
բերութեամբ ներս կը մտնէր պահ մը հանգչելու
մտօք: Ծառան միշտ աչուրները կապած այս ան-
գամ յստակ ոտքի ձայներ առնելով կը յառաջա-
նայ գէպի այն կողմը:

Տան տիկինը այս տեսնելով ապշած կը կե-
նայ: Ծառան կարծելով որ խոհարար կինն էր
անկիւղութեամբ մը ֆիւթանին բէշը քաշելով կը
պոռայ յողմանակաւ:

—Օխ, բռնեցի եա քեզի ֆիւթ-ճաշքսի, իշտէ
դուն պիտի սաս կոտրտո՞ւսախսիին փարան,
Փառաշ . . .

Երբ Ծառան աչուրները բանալով կը տեսնայ
ով ըլլալը, ալ երեւակայելու է իր դեմքը: Մ.

Գաւառացի երիտասարդ մը սուաշին անգամ
ըլլալով հարուստ տան մը մէջ ծառայութեան
մտած էր: Բնական է որ վարժ չըլլալով իր
արհեստին շատ անգամ պակասութեան մէջ կը
տնուէր:

Օր մը բարեկամներ այցելութեան կուգան
տան տիրոջ բացակայութեան միջոցին: Տգէտ
ծառան պէտք եղած կերպով չի դիմուորեր
զիրենք:

Տան տէրը խնդիրը կ'իմանայ և ծառան կը
յանդիմանէ ըսելով:

—Ծօ դուն հիշ մարդու մէջ չե՞ս մտած:

—(Չարմանօք) Ի՞նչ կայ քի աղա:

—Անցեալ օր եկած միսաֆիրներուն ան
ինչ գէշ ընդունելութիւն մը ըրեր ես:

—(Հետաքրքրութեամբ) Ի՞նչ ընելու էր
քի աղա:

—(Չեւքը գէպի գլուխը տանելով բարեկ
ձեւով) Իշթէ սանկ մը բօլիթիքա կ'ընեն հիշ
չէ՞նէ:

—Բէք ալէկ աղա:

Քանի մը օր վերջը մի քանի դրացիներ
այցելութեան կուգան: Ծառան դուռը բանալով
զանոնք «սալօնը» կը հրամայունէ ուր հիւրերը
կը հանգչին: Ծառան քիչ յետոյ իւրաքանչիւր
հիւրին ներկայանալով ձեռքովը կը բարեկ
ըսելով:

—Բօլիթիքա աղա, բօլիթիքա հանրմ,
բօլիթիքա մատմալէլ

.

քապլօ

ՁԵԿՈՑՑ

 Յաջորդ թերթով պիտի սկսինք հրատարակել
«Հայելի»ի բաժնեգինները կլլոյ մեծապատիւ մուրաց-
կանաց ցանկը: 

Թիւ 1 Հանելուկի լուծումն էր ՏՊՐԱԿԻ ԳՈՐ ԼՈՇԵ-
ցին Պ. ՍԵՂՐԱԿ ԳՈՐԷՄՃԵԱՆ ՎԱՃՆԱՆԷՆ, ԳՐԻԳՐԻՆ ՊՕ-
ղոսեան ՊԵՐՔԵՆԶԷՆ և ԼԵՆՆ ՅԱՐՈՒԹԻՆԻԱՆ ՍԼԻՎԷՆԷՆ:

Հետեւեալ քիւրքերը կը ծախուին Ա. Զարպհանել-
եան գրատունը:

Մխիթարեան յորեկեան	6 Ֆր.
Երգարան մանկապարտէզի	60 «.
Մրմունջ հայկական	1 Ֆր
Քնար հայկական	2 Ֆր
Մայրենի լեզու	1 20

ԹԵՐԹՈՆ «ՀԱՅԵԼԻ» (35)

ՌԻՆԷ ՏՐԻՍԵ ՍԵ

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐՈՒ ԳԵՏԸ

(ԳԱՐՄԻՐ-ՄԱՄՈՒԿԸ)



Սակայն, հակառակ ծովահենին նկատմամբ ի պորժ գրած ամեն լաւ միջոցներուն, բանտապանը չէր կրցած ուշագրաւ բաւ մը խել բերնէն, գէթ ծովահենու թեան կազմակերպութեանը և այն որջի մասին ուր այնքան ծարտարօրէն կը ծածկուէին՝ դետարներին մօտ ծովասպատակութիւն ընողները:

Մինակ երկու երեք անգամ, երբ զինքն հարցափորձած էին սոսկալի ընկերակցութեան հրամայող պետին վրայ, Բէյ-Հօ խօսելու պատրաստ երեւցած էր և աչքերն արիւնով լեցուած էին. բայց միշտ զսպած էր ինքզինքը և չէր արտաստած այն բառերը որք յայնապէս կը խօսէին իր շուրթերուն վրայ:

Սակայն երբեմն կը լսէին կցկտուր բառեր արաւսանելը որք սպառնալիքներու և անէծքներու կը նմանէին:

Դատապարտեալը հոգեկան այս վիճակին մէջ կը գտնուէր երբ, այն պահուն իսկ ուր բաջասիրտ Մէնկ կը պտըտէր քանդոնի արուարձանները Ֆօ-Հօբի հետ, այսինքն պատժին կատարուելուն առջի գիշերը, Բերքինս և իր բարեկամները բանտը մտան:

Ինչպէս ըսինք, ծովահենը հերքելեան հասակով հսկայ սրիկայ մըն էր: Դիմագիծերը անսոսկական էին բայց տարօրինակէս խելացի ու կորովի:

Տեսնելով երեք անգլիացիները, վեր առաւ գլուխը, առանց ելլալու կոշտ փսիւթին վրայէն որուն վրայ կծկուած էր, անոնց վրայ կեցուց նայուածք մը թէ՛ մտախռով թէ՛ հարցափորձիչ:

Քլիֆթըն նշան մը ըրաւ պահպանին և սա, իր լապտերը աթոռակի մը վրայ դնելէ յետոյ, գուրս ելաւ՝ գունն ետեւէն գոցելով:

Տոբթօրը, սըր Արթուր Մըրրէյ և նաւապետը մինակ էին Վանկ-Մուի նախկին պետին հետ:

— Բէյ Հօ, ըսաւ անմիջապէս տոբթօր Քլիֆթըն, գիտես որ վաղը պիտի կախուիս:

— Գիտեմ, պատասխանեց բանտարկեալը տրտում ձայնով:

— Կուզե՞ս ապրիլ

— Ապրիլ, ի՞նչ ընելու համար:

— Ի՞նչ գիտես: Սիրելու կամ վրէժ լուծելու համար: Բու տարիքդ ունեցող մարդ մը կամ կը սիրէ կամ կատէ միշտ:

Թշուառականին դէմքին տաւ արտայայտութեան բոխիչը հասկցաւ թէ ճիշդ գուշակած էր:

— Մտիկ ըրէ, շարայարեց, տանջանքին դիմացար առանց աղաղակ մը արձկելու, և կեանքդ շնորհելու խոստման հակառակ չազդեցիր խօսիլ:

— Հիտակ է:

— Ինչո՞ւ:

— Վասնզի չեմ ուզեր օտարականներուն յայտնել ընկերակցութեան գաղտնիքները:

— Լաութեանդ պատճառը ատիկա չէ՞:

— Ուրիշ չիկայ:

— Սուտ ես: Զուրի-Եղէգին վրայ քեզի չափ բան գիտենք: Քենէ խնդրուածն էր միմիայն ապացոյցը այն լսին համաձայնութեան որ կայ ծովահեններուն և նա հանգին իշխանութիւններուն միջեւ. բու տեղդ ծովահեններուն գլուխն անցնողին անունը, և Լատրոն կղզիներէն այն որ ապաստանարան կը ծառայէ, ինչպէս նաև անոր գիրքին վրայ տեղեկութիւններ:

— Կուզէին նաև որ իբրև առաջնորդ ծառայեմ ձեր մտադրած արշաւանքին:

— Այո, եւ բոլ ծառայութիւններուդ փոխարէն ոչ միայն կեանքդ պիտի շնորհուէր, այլ եւ ազատութիւն անպատժութիւն եւ հազար դահեկան: Սակայն մերժեցիր:

— Մերժեցիր:

— Պատճառը պիտի ըսեմ քեզի, վասնզի վախցար որ Հոնկ-Քոնկի կառավարիչը իր խոստումները չի բռններ եւ արշաւանքէն դարձին քեզի կախել կուտայ:

— Թերեւս ատոր համար է:

Քլիֆթըն երկրորդ անգամ ըլլալով կը կարգար դատապարտեալին սիրտը, վասնզի, ըստ երեւոյթին անտարբեր երեւոյթով մը պատասխանելով հանգերձ, անիկա չէր կրցած զսպել զարմանցման շարժում մը:

— Լաւ ուրեմն, շարունակեց տոբթօրը, միջոց մը պիտի ընծայեմ քեզ չխաբուելու:

— Ի՞նչ միջոց:

— Կախուելէդ ետքը խօսիս:

— Կախուելէս ետքը: Զեմ հասկնար:

Բէյ-Հօ կը կարծէր թէ սխալ լսած է կամ թէ իր խօսակցը, որ մաքայներէն կը խօսէր, իր գաղափարը սխալ յայտնող բացատրութիւն մըն էր գործածած:

— Աւելի յստակ պիտի խօսիմ: Վաղը պիտի

հախուիս. Հօրդ յիշատակին վրայ խօսք կուտաս յայտնել մեր ուզած բաները, կախապանէն վար իջնելէդ ետքը միայն.

— Երբոր մեռնիմ.

— Կախուելէդ ետքը.

Չկրնալով հաւատալ որ այդ երեք ծանրագէմ մարդերը որոց հետ գործ ունէր, միտունուն անցունէին իրեն հետ խաղ խաղալ այդքան սոսկալի պարագայի մը մէջ, ծովահէնը իր զարհուրանդին ակնարկները մէկէն միւսին կը տանէր, անշուշտ յուսալով որ բացատրութեանց մէկ մասը անոնց գէմքերէն պիտի կտահէր. բայց, ինչպէս բժիշկը, սրբ Արթուր Մըրրէյ եւ Բերքինս անզոքած էին.

— Ի՞նչ բան կը վտանգէս, դիտել աւելաւ տոբթոր քլիֆթըն.

— Իրաւ է թէ ոչինչ. Վերջապէս ի՞նչ կուզէք.

— Պարզապէս սա սրուակը չնչելդ.

— Եւ եթէ մեռցունէ զիս.

— Է՛հ, դուն քաջասիրտ ես. բու հոգդ է որ կամ այս իրիկուն մեռեր ես կամ վաղը ցորեկ.

— Ուրեմն երբ այս սուրակը չնչեմ.

— Պիտի կախուիս, բայց չպիտի մեռնիս, գէթ եթէ ուզես միւր պահանջած երգումն ընել և կատարեալ փտահոլութիւն ունենալ մեր վրայ.

Բէյ—Հո գլուխը ձեռքերուն մէջ առաւ եւ քանի մը վայրկեան վարանելու երեւոյթ ունեցաւ, յետոյ յանկարծ որոշումը տուաւ, եւ երբ աչքերը նորէն վերցուց իր այցելուներուն վրայ, դէմքը վերստացած էր իր կորովի արտայայտութիւնը.

— Լաւ, ըսաւ, կ'ընդունիմ. Հօրս յիշատակին վրայ կերպնում որ կախուելէս յետոյ ամեն ուզածնիդ պիտի ըսեմ ձեզի. Ի՞նչ որ ուզէք ըրէք զիս.

Առաւ բերեղէ փոքր սրուակը զոր բժիշկն իրեն կը կարկառէր և երկարօրէն չնչեց զայն.

Հինգ վայրկեան ետքը, անշուրժ փռուած էր փսիւթին վրայ որ իբրեւ անկողին կը ծառայէր իրեն, և կէս ժամ յետոյ սրբ Արթուր Մըրրէյ եւ Բերքինս դուրս կելլային խուցէն հոն թողլով քլիֆթընը, որ դիշերուան մէկ մասն հոն պիտի անցունէր.

Յաջորդ օրը, կէս օրէն քիչ առաջ, երբ բանտին տնօրէնը եկաւ այցելել բանտարկեալը, զոր մէկ քանի վայրկեանէն կախաղան պիտի դրկէր, կ'ընկուած գտաւ զայն, հանդարտօրէն ծխելով եւ իր հայրենակիցներուն սովորական անտարբերութեամբը մեռնելու պատրաստ.

Մաքսախոյսն ու անգլիացի ազնուականը որք պաշտօնատարին կ'ընկերակցէին, դահուանկութեան ժը-

պիտ մը փոխանակեցին, եւ իրենց ձիերն հեծնալով, որք բակին մէջ կը սպասէին, հանդարտաբայլ հասան կախման վայրը.

Վերն ըսինք հոն անցած դարցածը.

Երբ երկու բարեկամներն հասան, ամբոյսը ցրուած էր.

Մահաստուեր դաշտը գրեթէ ամալի էր, բայց խմբակ մը կը տեսնուէր հոն որ քիչ մը առաջ կողմուած էր.

Բերքինս մէկ ակնարկով ճանչցաւ զահիճն ու օգնականները. Ռուսի, ընպահաւակը բնաւ ճանչնալու երեւոյթ չունեցաւ նաւապետին դէմքը. շարունակեց վարել գործակալներուն աշխատութիւնները.

Ոմանք կը ժողուէին հինգ կախաղաններուն յատկացուած ատաղձները. Դի ձեւով որոց ամեն մէկէն պիտի կախուէին երկու դատապարտեալներ. Ուրիշներ գետինը կը փորէին խորունկ փոսերը ուր պիտի մխուէին կախաղաններուն ոտքերը.

Համոզուած թէ իրերը կանոնաւորապէս առաջ պիտի երթային՝ դահիճին հետ իր պայմանագրութիւններուն համեմատ, Բերքինս նորէն ձի հեծաւ եւ շատ չանցած միշտ ընկերակցութեամբ անբաժանելի սրբ Արթուրին, իր ամարանոցը կը դառնար, ուր կը փութար արթնցունել Մէնկը, որ քնացած էր այն յուզուած քուներէ մէկով որոց պաճառն էր տասնըհինգ օրէ ի վեր վարած խռովայոյց կեանքը.

Նախ և առաջ սոսկումի աղաղակ մը արձկեց. բայց, իր հիւրընկալը ճանչնալուն պէս, իր խոշոր բարի դէմքը սփոփանքի անձառ արտայայտութիւն մը առաւ.

(Շար.)

ԱՅԻՆԷԻ ԼԵԹԱՅԻՓ

ՊԻՆ ՊԻՐ ԱՏԷՏ

(ՄԻԻՆՏԵՐԻՃԱԹԸ)

Կիւլտիւրիւճիւ ֆգրալար վէ Հիքեայէլէր. Մալիւմաթը ֆէննիյէ. Լուղաթը Լէթայիֆ. ֆէննի Էյլէնճէլէր վէ Բէսիմի Պիլմէճէլէր:

160 սահիֆէտէն իպարէթ օլուպ, բէյտէրբէյ նէշր օլունան մէղքիւր քիթապըն պիւրիճի ճիւտի խիթամ պուլուպ, իտարէխանէմիլդտէ սաթըլմագաա տըր. Ֆիյ 2 ֆրանք.

Печатница „aВзимность“ — Варна.